ՌԻՄԱ ՇԱԼՈՒՆՑ

Կյանքից հեռացել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի երկարամյա աշխատակից, բ. գ. դ. Ռիմա Նիկոլայի Շալունցը:

Ռ. Շալունցը ծնվել է Գորիսում 1937 թ. հոկտեմբերի 9-ին: 1944 թ. ընդունվել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Ավարտելուց հետո որոշ ժամանակ աշխատել է Գորիսի պետական թատրոնում: 1961–1965 թթ. սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում, ապա ընդունվել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Բառագիտություն և բառարանագրություն» մասնագիտությամբ: 1972 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Համանուն բառերը ժամանակակից հայերենում», 1994 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ «Զանգվածային լրատվության լեզուն և ոճը» թեմաներով: Վերջինս որպես ուսումնական ձեռնարկ գործածվում է բուհերում:

Ռ. Շալունցը զբաղվում էր բառագիտությամբ: Հետաքրքիր են նրա դիտարկումները համանունների, հականիշների, տերմինային համանիշության և բազմիմաստության վերաբերյալ: Հեղինակել է «Արդի հայերենի համանունների դպրոցական բառարանը» (1980 թ.), որում ընդգրկված են ինչպես դպրոցական դասագրքերում, այնպես էլ հայ դասական և խորհրդային գրողների երկերում (XIX դ. 70-ական թվականներից սկսած) հանդիպող համանուն բառերը:

Անվանի լեզվաբանը բազմիցս հանդես է եկել մամուլում հանդիպող սխալների, դրանց վերացման, հայերենի անաղարտության վերաբերյալ հոդվածներով, որոնք սիրով և շնորհակալությամբ են ընդունվել ընթերցողների կողմից: Մասնակցել է «Մեր լեզուն, մեր խոսքը» հեռուստատեսային հաղորդաշարին՝ անդրադառնալով հայերենին անհարազատ ոճերին, հոլովական սխալ կիրառություններին, կապակցելիության սխալներին և այլն:

Ռ. Շալունցը 2000 թվականից բնակվում էր ԱՄՆ-ում: Մահացել է 2021 թ. հունվարի 22-ին: Նրան ճանաչողները միշտ կհիշեն՝ զուսպ, համեստ, աշխատասեր, իր գործին նվիրված մարդուն:

ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ